

## ԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարան*

### ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՍԵՐԻԿՅԱՆ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Յուրաքանչյուր արժեքավոր ստեղծագործություն մեծ ճանաչում է ստանում, երբ տարածում է գտնում տարբեր ազգերի մեջ, գնահատվում նրանց կողմից, սիրվում և դասվում հանրածանոթ գլոբալ գործոցների շարքում: Այստեղ շատ կարևոր է թագմանության դերը, որի շնորհիվ այս կամ այն ստեղծագործությունը վերարտադրվում է որևէ լեզվով և «մատուցվում» ընթերցողին: Թարգմանության արվեստը դեռևս վաղուց եղել է բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում և առ այսօր արդիական է:

Գաղնիք չէ, որ ժամանակակից լեզվաբանության մեջ լեզուների զուգադրական ուսումնասիրությունը շատ է կարևորվում, որն առավել համակողմանի պատկերացում է տալիս տվյալ լեզվի մասին: Հարկ է նշել, որ զուգադրական մեթոդով գեղարվեստական երկի և նրա թարգմանական տարբերակների քննությունը խթանում է ստեղծագործության արտահայտչական երանգավորումների բացահայտմանը, ինչպես նաև ոճական առանձնահատկությունների վերհանմանը /Задорнова, 1984/: Չուգադրական վերլուծության շնորհիվ կարելի է ներթափանցել բնագրի գաղտնիքների մեջ, որը թույլ կտա լիովին տիրապետել այս կամ այն լեզուն:

Ստորև բերենք բանաստեղծության մի օրինակ հանճարեղ Ուոլթ Ուիթմենի ստեղծագործություններից.

In midnight sleep, of many a face of anguish,  
Of the look at first of the mortally wounded—of that indescribable  
look;  
Of the dead on their backs, with arms extended wide,  
I dream, I dream, I dream.  
Of scenes of nature, fields and mountains;  
Of skies, so beauteous after a storm—and at night the moon so  
unearthly bright,

Shining sweetly, shining down, where we dig the trenches and gather the heaps,

I dream, I dream, I dream.

Long, long have they pass'd—faces and trenches and fields;

Where through the carnage I moved with a callous composure—or away from the fallen,

Onward I sped at the time—But now of their forms at night,

I dream, I dream, I dream.

In Midnight Sleep, Walt Whitman

(<http://www.poemhunter.com/poem/in-midnight-sleep/>)

Բանաստեղծության բովանդակությունը շատ պարզ է. հերոսը իր երագներում տեսնում է դառը պատերազմի աղետալի հետևանքները, որը նրան ցավ է պատճառում: Այդ երագներն անընդհատ կրկնվում են, և հեղինակի աչքի առջև են գալիս այնպիսի տեսարաններ, ինչպիսիք են հազարավոր ընկած զինվորների դիերը, մահացու վիրավորի հայացքը և փոթորիկից հետո խաղաղված երկինքը, որը եղել է այս ամենի վկան: Հեղինակը նույնպես եղել է այս հրեշավոր իրողությունների ականատեսը, և շարունակվող երագների միջոցով նա վերապրում է այն ցավալի պահերը, որ այլևս չկան: Ստեղծագործությունը ազատ ոտանավոր է, որտեղ բանատողերի ոտքերի քանակը խիստ տարբերվում է մեկը մյուսից: Բանաստեղծության մեջ աչքի ընկնող արտահայտչամիջոցների շարքում պետք է առանձնացնել կրկներգի առկայությունը յուրաքանչյուր տան վերջում *I dream, I dream, I dream*, որը հատվածն օժտում է շարունակակալությունամբ և հարակրկնության առկայությունը, որն արտահայտվել է նախդիրներով *Of scenes of natur, fields and mountains; Of skies, so beauteous after a storm-and at night the moon so unearthy bright*, որոնք տեքստն օժտում են նուրբ ռիթմային ելևէջումներով: Բերենք բնագրի հայերեն տարբերակը և փորձենք պարզաբանել, թե որքանով է թարգմանչին հաջողվել վերարտադրել տեքստը՝ միևնույն ժամանակ պահպանելով այն կարևոր, առանցքային արտահայտչամիջոցները, որոնք առնչանակալին իմաստ են հաղորդում ստեղծագործությանը:

Գիշերվա կեսին քնիս մեջ դեմքը տառապանքի  
Առաջին հայացքը մահացու վիրավորի/աննկարագրելի  
հայացք/,

Տարածած ձեռքերով մեջքված մեռյալներ,  
Երագ է, երագ է, երագ է:

Բնապատկերներ, դաշտեր ու լեռներ,  
Փոթորկից հետո երկինքը խաղաղ, ոչ երկրային փայլով լուսին  
գիշերվա,

Որ փայլում է քաղցր, լույս գցում ներքև, ուր փորում ենք  
խրամատ և կույտեր դիզում,  
Երագ է, երագ է, երագ է:

Վաղուց անցել են՝ դեմքեր, խրամատ ու դաշտեր,  
Կոտորածների միջով են անցել՝ կարծրասիրտ ու զուսպ, լքել  
ընկածներին

Ու ժամանակին առաջ ընթացել- այժմ նրանց տեսիլքը  
կեսգիշերին  
Երագ է, երագ է, երագ է:

*Թարգմանությունը՝ Արտեմ Հարությունյանի  
(Հարությունյան, 2000: 116)*

Բնագիրն ու թարգմանական տարբերակն ընթերցելիս հասկա-  
նում ես, որ որոշ հատվածներ կարիք ունեն մասնակի փոփոխու-  
թյան, քանի որ որոշ բառերի անհամարժեք թարգմանությունը բերում  
է բովանդակության մթագմանը, ինչի արդյունքում էլ ընթերցողը լի-  
վին չի ընկալում հեղինակի արտահայտած միտքը: Ընթերցողի  
ուշադրությունը հրավիրենք բանաստեղծության առաջին երկու  
տողերի թարգմանությանը, որը, մեր համոզմամբ, փոքր ինչ փոփո-  
խության կարիք ունի:

In midnight sleep, of many a face of anguish,  
Of the look at first of the mortally wounded—of that indescribable  
look;

Of the dead on their backs, with arms extended wide,

Գիշերվա կեսին քնիս մեջ դեմքը տառապանքի  
Առաջին հայացքը մահացու վիրավորի /աննկարագրելի  
հայացք/,

Տարածած ձեռքերով մեջքված մեռյալներ...

Այստեղ թարգմանիչը փորձել է բառացիորեն վերարտադրել հատվածը, որի արդյունքում առաջ են եկել այնպիսի բառային համադրություններ, որոնք մի փոքր համահունչ չեն: Այսպես, «a face of anguish» թարգմանվել է- «ղեմքը տառապանքի», ուշադրության է արժանի նաև «dead on their backs» – «մեջքված մեռյալներ» արտահայտությունը, որը մեր համոզմամբ նույնպես ենթակա է փոփոխման: Բառարանային վերլուծությունը ցույց է տալիս, որ «մեջքված» միավորը խորթ է հայերենին: Եվ եթե անգամ դա հեղինակային է, այն իր մեջ կարծես դրական երանգավորում ունի: Ընթերցողի մոտ **մեջքված** միավորը ընկալվում է որպես մեջք մեջքի տված, այնինչ հեղինակը նկարագրում է «պատերազմում ընկած զինվորներին»: Մեր ընկալմամբ ճիշտ կլիներ թարգմանել «մեջքնիվայր մեռյալներ» կամ «ընկած մեռյալներ», որը լիովին համահունչ է բովանդակությանը, իսկ «ղեմքը տառապանքի» արտահայտությունը մեր կարծիքով ճիշտ կլիներ թարգմանել համարժեք **տառապյալ ղեմքեր** միավորով:

Թարգմանության մեջ նաև չեն պահպանվել նաև նախդրային կրկնությունները, որոնք ռիթմիկ երանգավորում են հաղորդում տեքստին: Եվ արդյունքում էլ բնագրում հուզական երանգները ավելի ընդգծված են՝ շնորհիվ *“Of”* նախդրային կրկնությունների:

Բանաստեղծության մեջ, ինչպես վերը նշեցինք, կարևոր է նաև կրկներգի դերը, որը պարբերաբար արտահայտվում է յուրաքանչյուր տան վերջում՝ արտահայտելով երազների շարունակական բնույթը: Բնագրում կրկներգն արտահայտվում է ենթակայի և ստորոգյալի կրկնությամբ՝ *I dream, I dream, I dream*, որը հայերենում վերարտադրվել է հետևյալ կերպ՝ *Երազ է, երազ է, երազ է*: Մեր համոզմամբ հայերեն տարբերակում այն կորցրել է իր կարևորագույն հատկանիշներից մեկը՝ անընդմեջ կրկնվող երազների շարժունակությունը: Բանաստեղծության վերլուծությանը անդրադարձել է նաև Արսենյան Վահեն իր թեկնածուական ատենախոսության մեջ, որտեղ նա խոստովանում է. «կրկներգը, որը բանաստեղծության ամենասակնհայտ բայական կրկնությունն է, ընդգծում է ոչ միայն երազների հաստատուն հարատևությունը, այլև հեղինակի հաստատ որոշումը՝ գլուխ հանել այդ երազներից» /Արսենյան, 2004/: Հաշվի առնելով կրկներգի արժեքն ու կարևորությունը՝ հարկ ենք համարում այն թարգմանել

*երագում եմ, երագում եմ, երագում եմ* ձևը, որը պահպանում է անընդմեջ կրկնվող երագների հարատևությունը:

Ստորև ընթերցողի ուշադրությունը հրավիրենք ամերիկյան մյուս ակնառու բանաստեղծի՝ Ֆրոսթի հանրահայտ բանաստեղծության վրա: Այս բանաստեղծությունը թարգմանվել է և՛ Ա. Հարությունյանի և՛ Ս.Սկրտչյանի կողմից: Թարգմանության երկու տարբերակները փորձենք ենթարկել վերլուծության և պարզաբանենք, թե որքանով է նրանց հաջողվել համարժեք թարգմանել:

Whose woods these are I think I know  
His house is in the village though;  
He will not see me stopping here  
To watch his woods fill up with snow.

My little horse must think it queer  
To stop without a farmhouse near  
Between the woods and frozen lake  
The darkest evening of the year.

He gives his harness bells a shake  
To ask if there is some mistake.  
The only other sound's the sweep  
Of the easy wind and downy flake .

The woods are lovely, dark, and deep,  
But I have promises to keep,  
And miles to go before I sleep,  
And miles to go before I sleep.

Stopping by Woods on a Snowy Evening, Robert Frost  
(<http://www.poemhunter.com/poem/stopping-by-woods-on-a-snowy-evening-2/>)

Բանաստեղծությունն ունի հստակ կառուցվածք, և յուրաքանչյուր բանաստեղծական տուն ունի ուրույն հանգավորում: Ստեղծագործության մեջ կարևոր հատվածը վերջին բանաստեղծական տունն է, որտեղ ունենք կրկնության ինքնատիպ դրսևորում՝ *պիտա-*

*կոթքուն* (*Antanaclasis*), երբ կրկնված բառերից մեկը ունի մի, իսկ մյուսը՝ մեկ այլ իմաստ *And miles to go before I sleep, And miles to go before I sleep*: Այս երկու բանաստորերում կիրառված sleep բառը մի տողում ձեռք է բերել *քնել* իմաստը, իսկ մյուսում՝ *մեռնել* իմաստը: Ստորև ներկայացնենք Արտեմ Հարությունյանի թարգմանական տարբերակը.

*Ձյունոտ մի գիշեր կանգնելով անտառում  
Ում անտառն է սա՝ թվում է գիտեմ,  
Թեկուզ տունը նրա խորքում է գյուղի,  
Նա ինձ չի տեսնում այս թավուտներում,  
Եվ անտառն հիմա կորած է մութում:*

*Ձիուկիս պետք է տարօրինակ թվա՝  
Բնակավայրից հեռու կանգնել ենք հիմա,  
Անտառի ու այս լճակի միջև,  
Ամենախավար գիշերվա խորքում:*

*Ձիս լուռ ցնցում է լծասարքի զանգը,  
Ասես հարցնում՝ որն է իր սխալը.  
Հետո լավում է շաչյունը քամու  
Եվ ձյան շարժումը՝ անտառի վրա:*

*Անտառն հրաշք է՝ խորը ու մթին,  
Բայց ես խոստում ունեմ մեկին  
Եվ մղոններ պիտի զնամ՝ մինչև քնելս հավիտյան,  
Եվ մղոններ պիտի զնամ, մինչև քնելս հավիտյան:*

*Թարգմանությունը՝ Արտեմ Հարությունյանի  
(Հարությունյան, 2000: 118)*

Թարգմանական այս տարբերակում ոտքերի քանակը չի համապատասխանում բնագրին: Այնուամենայնիվ թարգմանչին հաջողվել է բանաստեղծական տներում պահպանել առկա հանգավորումը, թեև պետք է ասել, որ որոշ հանգավորումներ մի տեսակ արհեստական են հնչում և չունեն այն հուզական, ռիթմիկ երանգավորումը, որն առկա է բնագրում: Այսպես, օրինակ, *թավուտներում-մութում*, որտեղ մութում

բառը կարծես չի հնչում ընթերցողի ականջին: Բնագրում վերջին տան մեջ ունենք համատարած հանգավորում (deep-keep-sleep-sleep), որը թարգմանական տարբերակում վերածվել է կից հանգավորման (մթին-մեկին-հավիտյան-հավիտյան): Առանձնակի ուշադրության է արժանի բանաստեղծության վերջին տունը, որտեղ կրկնության ինքնատիպ դրսևորումը՝ պիտակությունը, ողջ բանաստեղծության իմաստակիր միավորն է:

And miles to go before I sleep,  
And miles to go before I sleep  
Եվ մղոններ պիտի գնամ՝ մինչև քնելս հավիտյան,  
Եվ մղոններ պիտի գնամ, մինչև քնելս հավիտյան:

Բնագրում sleep բառը երկակի իմաստ է ձեռք բերել, որտեղ առաջին դեպքում նշանակում է *քնել*, իսկ երկրորդ մասում ձեռք է բերել *մահանալ* իմաստը: Թարգմանիչը հասկացել է հեղինակի միտումը, որ բանաստեղծությունը մահվան մասին է: Թարգմանական տարբերակում կրկնությունն արտահայտվել է հետևյալ կերպ՝ *Եվ մղոններ պիտի գնամ՝ մինչև քնելս հավիտյան, Եվ մղոններ պիտի գնամ, մինչև քնելս հավիտյան*: Սակայն այստեղ արդեն չի պահպանվել կրկնության ինքնատիպ դրևորումը՝ պիտակությունը: Թարգմանիչը այն պարզ ձևով մատուցել է ընթերցողին, այնինչ բնագրում հեղինակը ընթերցողին թողնում է սեփական մտորումների մեջ և ստիպում յուրովի մեկնաբանել իր խոսքը: Պատկերը մի փոքր այլ է մյուս թագմանական տարբերակում:

*Ես լավ գիտեմ, թե ում անտառն է սա:  
Անտառապահը գյուղում է հիմա  
Ու չի կասկածում, որ այստեղ կանգնած  
Գիտում եմ ձյունոտ անտառը նրա:*

*Չարմանում է իմ ձիուկը թմրած  
Ինչու կանգնեցինք դաշտերում այս բաց,  
Անտառի ու այս լճակի միջև,  
Այն էլ զիշերվա ժամին մթամած:*

*Չանգույակներն են ցնծում հևհև՝  
Ինչու ենք կանգնել դաշտերում այս սև.  
Լսվում է միայն մեղմիկ մի հառաչ,  
Փաթիլներ իջնող ու քամի թեթև:*

*Անտառը այնպես խորն է մթին  
Բայց խոստում ունեն ես տված մեկին,  
Ու երկար ճամփա՝ քնելուց առաջ  
Ու երկար ճամփա՝ քնելուց առաջ:*

*Թարգմանությունը՝ Սամվել Սկրտչյանի  
([http://issuu.com/jassamvel/docs/american\\_poetry](http://issuu.com/jassamvel/docs/american_poetry))*

Թարգմանությունը ընդհանուր առմամբ հաջողված է, սակայն ոտքերիքի քանակը նույնպես չի համապատասխանում բնագրին, անուամենայնիվ, բոլոր տողերը մաքուր հնգաչափ են, իսկ բնագրում ունեինք տետրամետր: Իսկ ահա առաջին թարգմանական տարբերակում տողերի ոտքերի քանակը խիստ բազմազան է: Ինչ վերաբերում է հանգավորմանը, ապա այստեղ նույնպես դրանք ավելի ցայտուն են, քան նախորդ թարգմանական տարբերակում (***սս- հիմն- նրա; թմրած-քաղ-մթամած; հևհև-սև-թեթև***): Ինչպես նախորդ թարգմանական տարբերակում, այստեղ նույնպես բնագրի համատարած հանգավորումը վերածվել է կից հանգավորման (***deep-keep-sleep-sleep***) – (***մթին-մեկին-առաջ-առաջ***): Այստեղ կարևոր է ևս մի հանգամանք. Սամվել Սկրտչյանի թարգմանական տարբերակում պահպանվել է կրկնության ինքնատիպ դրսևորումը՝ պիտակությունը՝ ընթերցողին նույնպես թողնելով յուրովի ընկալելու հեղինակի միտքը. ***Ու երկար ճամփա՝ քնելուց առաջ, Ու երկար ճամփա՝ քնելուց առաջ:***

Եվ այսպես, գեղարվեստական ստեղծագործության՝ հատկապես չափածո խոսքի համարժեք թարգմանությունը բարդ գործընթաց է, որը պայմանավորված է նրանում առկա բարդ տաղաչափական համակարգերի, լեզվարտահայտչական միջոցների, ոճի բազմաբնույթ էությանը, քանի որ թարգմանիչը համադրում է տարբեր մշակույթներ, տարբեր լեզվամտածողություններ:

Մեր կողմից կատարված վերլուծություններից հետո կարող ենք եզրակացնել, որ անգամ մեկ բառի անհամարժեք թարգմանությունը



կարող է նվազեցնել բանաստեղծության հուզական ֆոնը, որի արդյունքում հեղինակի խոսքը դառնում է միապաղաղ և ոչ բանաստեղծական:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արսենյան Վ. Ուիթմենյան Ավանդույթները և 20-րդ դարի առաջին կեսի ամերիկյան պոեզիան/ Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2004:
2. Բաղդասարյան Հ. Թարգմանության ներածություն, Երևան, 2007:
3. Հարությունյան Ա. Ընտրանի անգլիական և ամերիկյան պոեզիայի, Երևան, Ապրիլոն, 2000:
4. Պողոսյան Պ.Մ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ. հ.1, Երևան, 1991:
5. Задорнова В.Я. Восприятие и интерпретация художественного текста. Москва, Высшая школа, 1984.
6. Ларин Б.А. Эстетика слова и язык писателя. Ленинград, 1974.
7. Лотман Ю.М. Структура художественного текста. Москва, 1970.
8. Моисеева Л.Ф. Лингвостилистический анализ художественного текста. Киев: Высшая школа, 1982.
9. Hollis C. Language and Style in "Leaves of Grass". Louisiana State University Press, Baton Rouge, 1983.
10. Jakobson R. Linguistics and Poetics // Style and Language. USA: Mass., 1963.
11. [www.hunterpoems.com/robert-frost/poems/](http://www.hunterpoems.com/robert-frost/poems/)
12. [www.hunterpoems.com/walt-whitman/poems](http://www.hunterpoems.com/walt-whitman/poems)

**Ա. МЕЛКОНЯН** — *Проблема эквивалентности повтора в американской поэзии.* – В статье ставится вопрос о чрезмерной сложности поэтического перевода, так как эквивалентный перевод является сложным процессом, который обусловлен некоторыми параметрами: сложно-ритмическая система, лингвостилистические средства, разные стили. Переводчик сопоставляет разные культуры, разные мышления. Языковые средства, а именно повторы, в произведениях Уитмена имеют коннотативные значения, так как они не только придают звучность и мелодичность тексту, но и являются смыслообразующими носителями.

**A. MELKONYAN – *The Problem of Equivalence of Repetition in American Poetry.*** – The paper touches upon the problem of equivalent translation of repetition in W. Whitman's and R. Frost's poems. The thorough study of their poetry has shown that the application of repetition plays an important role in their praise. Thus, the task of the translator is to preserve all the possible expressive means which contribute to the better understanding of the author's thoughts without which the text would lose its emotional, evaluative colourings.